

## «Ինեկոբանկ» ՓԲԸ կայքի միջոցով «Առցանց վճարումներ»-ի իրականացման պայմաններ և սակագներ

Ինեկոբանկի պաշտոնական կայքում «Առցանց վճարումներ» կարող են իրականացվել տեղական և միջազգային բանկերի կողմից թողարկված ArCa, Visa և Master վճարային քարտերով:

### 1. «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործարքները՝

- **հաշվի համալրում** - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի՝ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընթացիկ և խնայողական հաշիվներին,
- **քարտի համալրում** - հնարավոր է կատարել փոխանցումներ Ինեկոբանկի՝ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների քարտային հաշիվներին,
- **վարկի մարում** - հնարավոր է կատարել Ինեկոբանկի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին տրամադրված վարկերի մարումներ վարկային պայմանագրի կողք մուտքագրելու միջոցով,
- **ավանդի համալրում** – հնարավոր է համալրել ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների կողմից Ինեկոբանկում ներդրված ավանդները պայմանագրի համարը և ավանդատուի անձնագրի տվյալները մուտքագրելու միջոցով:

### 2. «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարված գործարքների<sup>1</sup> համար կիրառվում են հետևյալ պայմաններն ու սակագները՝

---

<sup>1</sup> Գործարքներ են համարվում հաճախորդի կողմից կատարված գործարքները:

<b>Գործառնության տեսակ</b>	<b>Սակագին<sup>2</sup></b>
Մեկ գործարքի առավելագույն գումար	500,000 ՀՀ դրամ
Հաշվի համալրում	<ul style="list-style-type: none"> <li>• 0.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում</li> <li>• 2.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում</li> </ul>
Քարտի համալրում	
Ավանդի համալրում	
Վարկի մարում	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային գծի դեպքում կիրառվում է սույն փաստաթղթով <i>Քարտի համալրման</i> համար սահմանված սակագինը</li> </ul> <p>Այլ վարկերի դեպքում`</p> <ul style="list-style-type: none"> <li>• 100 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար` ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված քարտերի դեպքում</li> <li>• 2.5%` ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կողմից թողարկված Visa և Master տեսակի քարտերի դեպքում</li> </ul>

<sup>2</sup> Անկախ սույն սակագներով սահմանված վճարներից քարտը թողարկող բանկի կողմից կարող են գանձվել վճարներ` համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

3. Արտարժութային վճարային քարտով փոխանցում/վճարում կատարելու դեպքում գործարքը տեղի է ունենում 33 դրամով, իսկ փոխարկումը՝ համաձայն քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
4. Արտարժութային գործարքի դեպքում մուտքագրված գումարը փոխարկվում է համապատասխան արժույթի՝ համաձայն Ինեկոբանկի կողմից սահմանված փոխարժեքի:
5. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդը/վարկը առավելագույնը 10 րոպեների ընթացքում:
6. Տեխնիկական խնդիրների/խափանումների դեպքում Բանկը գործարքի գումարը հասանելի է դարձնում ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին կամ գործարքի գումարի չափով համալրում/մարում է նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդը/վարկը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:
7. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկը հաճախորդին տրամադրում է գործարքը հավաստող էլեկտրոնային անդորրագիր:
8. Հաճախորդի կողմից գործարքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պատշաճ կատարելուց հետո Բանկի կողմից գործարքի գումարը ստացողի քարտին կամ վերջինիս բանկային հաշվին հասանելի դարձնելու պահից կամ գործարքի գումարի չափով նշված պայմանագրի համարով/վարկային կոդով ավանդի/վարկի համալրման/մարման պահից Բանկի պարտավորությունները համարվում են կատարված:
9. Սույն առցանց վճարումների կատարման համակարգը չի հանդիսանում առևտրի և սպասարկման կետին վճարում կատարելու գործիք և չի երաշխավորում ենթադրյալ բարիքի ստացումը: Բանկը պատասխանատվություն չի կրում գործարքի կատարմամբ դրա մասնակիցներին կամ այլ անձանց պատճառված վնասների համար:
10. Կատարված գործարքները ենթակա չեն չեղարկման առանց գումարը ստացող անձի համաձայնության: